(Դարաչիչակ). վար ու ցանքը արդէն բաւական ուշացած է ցրտի պատճառաւ, որով կանուչած ցորենը տակաւին նոր բուսածից շատ տարբեր չէ երևում ներկայումս, այն ինչ, ինչպէս լսում եմ, այդ կողմերը հունձը հասած է. բայց պէտք է ասել՝ որ արտօրայքը Աստուծով լաւ երես են ցոյց տալիս։ Այս ցրտութիւնը մի դժբախտութեան անսովոր հարուած տուեց՝ վերջապէս նահանգիս ողորմելի գիւղացիներին. և այս պատահմունքը այսպէս եղաւ։ Անցեալ յունիս ամսոյ 25 ին երաշտային եղանակը յանկարծ փոխուեց անձրևային եղանակի, և անձրևը մի քանի օր տևելուց յետոյ ցրտութիւնը սաստկացաւ և ձիւն դրեց մօտակայ սարերի վրայ. և ըստ որում ոչխարները արդէն գտնվում էին սարերումը, և քանի օրով առաջ բրդերը կտրած էին, այս պատճառաւ ցուրտը շատ ոչխարներ կոտորեց նոյն դիշերումը, ինչպէս ասում են, ամեն մի գիւղից 150, 200 և 300 հատերով, և բոլորը ծնած և կթի (կաթնատու) ոչխարներ։ Այս դժբախտ պատահմունքը և կորուստը՝ ողորմելի ժողովրդոց համար փոքր նշանակութիւն չունի։ Մի և նոյն վնասը պատահած է նոյն միջոցում՝ ինչպէս լսում եմ՝ նաև Ապարանայ նահանգումը և գաղթական այլազգեաց մէջ էլ, որք ամենայն տարի Ղազախից և այլ ջերմ երկիրներից գալով վերաբնակում են այս Վարաժնունեաց լեռնոտներումը, և աշնանը վերադառնում են իւրեանց տեղերը, որոնք թէ աւազակութեամբ և թէ արօտատեղիքը յափշտակելով՝ սակաւ վնաս և նեղութիւն և թշնամութիւն չեն հասցնում և պատճառում Հայոց մերձակայ գիւղերին։

Խ. Օ. Նդէայ Վարդապետ Ջալալեանց։
Է 10-ն յունիսի 1870 -դ
Է Ս. Անդրեան ՍԼՈՒ։

Խմբագրական Արարատ Ամսագրոյ։

Նիժ գեղջ ժողովրդականաց բարեփափագ ըղձից՝ Վեհափառ Հայրապետի ազգասէր կամաց համաձայն, որ և Նորին Օծութեան Կոնդակաւ և յատուկ հրաւանաւ՝ նոյն գեղջ Նորաշէն Եկեղեցւոյ օծման առիթով՝ անձին աշխատութեամբ՝ կատարումն տալով հաստատեցի տեղւոյն և մօտակայ գիւղօրէից մէջ գտնուած Հայ մանկտեաց դաստիարակութեան համար՝ մի Նոր կրթարան։ Եւ դպրոցին նիւթական միջոցի կարօտութիւնը լցնելու և յարատևութեան մէջ պահպանելու դիտմամբ՝ խնամարկուք ընտրեցի յաղգասիրաց, և դպրոցի կառավարութիւնը յանձնեցի Նոցա ջանից և աշխատութեանց. որք և իրրև պարտականութիւն ազգասիրութեան իւրեանց յանձն առին սիրով յառաջ վարել ստանձնեալ պաշտօնը և միանգամայն հոգալ 'ի սեպհականութեանց իւրեանց ուսուցչաց և դպրոցի ծախսը։

Ներկայ միջոցներս եկեղեցեաց այցելութեամբ գիւղերը շրջագայելով, և իւրաքանչիւր եկեղեցւոյ պարսպի մէջ՝ բարձու հրամանաւ Վեհափառին մերոյ՝ ծխական կրթարաններ բանալ և հարկաւոր պատուէրները Քահանայից և Ժողովրդոյ աւանդելով և կարգադրելով, պատահեցայ Նիժ գիւղ, որոյ բաղկացութիւնը հինգ հարիւր տանց կ՚հասնի. ուր և Նորաբաց կրթարանի յառաջադիմութիւնը սակաւ ինչ տեղեկանալու իրաւ ունենալով, մի մի բոլոր աշակերտները իւրաքանչիւր ուսանելի առարկայից մէջ հարկ համարեցի հարցափորձել ինքնին. և գտի սուղ միջոցի մէջ բաւական յառաջադէմ, որ արդարև անակնուանելի էր տեսնել մայրենի լեզուի անտեղեակ երեխայք՝ ուղիղ խօսել, գրել յստակ և կարդալ վարժ։

Ահա սորա հետ՝ ուրախութեամբ սրտի՝ ամսագրոյդ ուղղելով աշակերտաց թուոց և յառաջադիմութեանց ցուցակը *) խնդրեմ հրատարակել պատուական թերթերուդ մէջ 'ի խրախոյս ծնողաց Նոցին և ուսումնասէր ազգասիրաց։

ՓՈԽԱՆՈՐԴ ՆՈՒԽ Աբեղայ Վարդապետ։
Ի 18 յունվարի 1870 -դ
Է Ք. ՆՈՒԽԻ։

(*) Բոլոր աշակերտաց թիւն է. 41. եւ երկու դասից բաժանուած են. դաս տուեալ առարկայքն են, ընթերցանութիւն, քերականութիւն, թուաբերն, թարգմանութիւն, թուաբանութիւն, վայելչագրութիւն, երգեցողութիւն եւ կրօնագիտութիւն։

Ցուցակին մէջ ըստ բաւականին գոնացուցիչ էին Բ. դասի աշակերտաց (15 էն 4 ին բացառութեամբ) յառաջադիմութիւնը նոյն առարկայից մէջ։

Ն. Խ.